43

# Ինձ օգնել է Իսաբեկյանների իմ արյունը

***Անժխտելի փաստ է ժամանակի ազդեցությունը արվեստագետի ստեղծագործական կյանքում: Սակայն ինչպե՞ս են նրանք ապրում այդ ժամանակը, ինչպե՞ս են ընկալում կյանքի շրջադարձերը, ե՞րբ է գալիս հաջողությունը, ու ե՞րբ է նահանջում ճգնաժամը, և վերջապես՝ արվե՞ստն է նրանց մեջ, թե՞ նրանք արվեստի:***
***Այս հարցերի շուրջ իր յուրօրինակ պատասխաններն ունի նկարիչ, Երևանի պետական գեղարվեստի ակադեմիայի ռեկտոր Արամ Իսաբեկյանը:***



*Ձեր ստեղծագործական գործունեության ո՞ր շրջանն եք շահեկան համարում:*

Այդ հարցին, հավանաբար, ուրիշներն ավելի լավ կպատասխանեին, ավելի լավ կգնահատեին՝ անցյալում և հիմա արված իմ աշխատանքները: Բայց եթե իմ կարծիքն եք ուզում իմանալ... Ինձ դուր է գալիս այն, ինչ ես անում եմ հիմա: Հիմա ավելի ազատ եմ աշխատում: Եթե առաջ ստեղծագործելիս ավելի շատ մտածում էի տեխնիկայի մասին, ապա հիմա ինձ համար ավելի կարևորն իմ միտքն է, իմ գաղափարը: Իսկ տեխնիկային ես արդեն տիրապետում եմ լիովին, ինչքան գիտեմ՝ գիտեմ, ոչինչ չի ավելանալու: Ավելի ազատ եմ աշխատում, ավելի արագ, ավելի արդյունավետ: Հիմա արդեն ես «ես» եմ, իմ ոճն ունեմ: Որտեղ էլ տեսնեն իմ նկարները, ոճից կասեն, որ դրանք Արամ Իսաբեկյանի նկարներն են: Ինձ ավելի հարազատ է իմ ներկայի նկարչությունը: Եթե առաջ ինչ-որ ազդեցությունների տակ էի ընկնում, որը շատ բնական է արվեստագետի համար, հիմա՝ ոչ, արդեն անցել եմ այդ շրջանը:

*Ժամանակների ազդեցությունը զգո՞ւմ եք Ձեր աշխատանքների վրա:*

Զգում եմ և չեմ կարող չզգալ, որովհետև նկարիչ եմ, ապրում եմ Հայաստանում և տեղի ունեցող անցուդարձերն ազդում են իմ տրամադրության, հետևապես՝ իմ աշխատանքների վրա: Այդ ազդեցությունը երևում է իմ կտավներում: Մարդը չի կարող դժբախտության մեջ լինել և ծաղիկներ նկարել: Վերջերս ես ավելի շատ դիմանկարներ եմ նկարում, մեծ մասամբ՝ պատշոնյաների: Եվ քանի որ յուրաքանչյուր աշխատանքում ես իմ վերաբերմունքն եմ դնում, «ժամանակ» ասվածը շատ լավ երևում է:

*Գեղարվեստի ակադեմիայի ռեկտոր և արվեստագետ. հակասություններ լինո՞ւմ են:*

Ճիշտն ասած՝ մեկը մյուսին շատ են խանգարում. ինչպե՞ս կարող են չխանգարել: Գիտե՞ք, արվեստագետի համար արվեստը պետք է լինի նրա առաջին սերը և... միակ սերը: Մարդու կյանքն այնքան կարճ է, որ չի հերիքում՝ մեկ ոլորտում լիովին բացահայտվելու համար, նույնիսկ եթե նրա տաղանդն այդ հնարավորությունը տալիս է, ուր մնաց մի քանիսում: Գեղարվեստի ակադեմիայի իմ աշխատանքը շատ կարևոր ու պատասխանատու է: Ցանկացած գործ ես նվիրումով եմ անում, ակադեմիայի ռեկտորի իմ աշխատանքը՝ նույնպես: Երևի թե անում եմ ավելին, քան պետք է: Դրա հետ մեկտեղ՝ ես ժամանակ եմ գտնում նաև նկարելու, կարողանում եմ ցուցահանդես բացել: Այդ ամենն անում եմ իմ առողջության, իմ անքնության հաշվին: Բայց, երևի, դրա մեջ էլ մի լավ բան կա:

Ես էությամբ անհանգիստ մարդ եմ: Եթե սա չլիներ, ուրիշ բան կգտնեի անելու: Առաջ ես շատ էի նկարում, օրական 8-9 ժամ ստեղծագործում էի, իսկ հիմա շատ գոհ եմ լինում, եթե կարողանում եմ նկարել գոնե 2-3 ժամ: Այս ամենից բացի՝ դեռ հասցնում են հոգիդ էլ պղտորել, իսկ հետո հարցնել՝ «ինչո՞ւ են քեզ մոտ երբեմն մռայլ նկարներ ստացվում»: Դրանք էլ իմ հոգու տրամադրության արդյունք են:

*Ասում են՝ երբ արվեստագետն անցնում է վարչական աշխատանքի, նա սկսում է ճգնաժամ ապրել: Ձեր տեսակետը...*

Որ խանգարում է, ես արդեն ասացի՝ այո, բայց ճգնաժամի հետ համաձայն չեմ: Արվեստագետը, իհարկե, պետք է ժամանակ գտնի՝ շատ աշխատելու, շատ ստեղծագործելու: Բայց ես չէի ասի, որ արվեստագետն իմ մեջ ճգնաժամ է ապրում, և ոչ ոք չի կարող դա ասել՝ չնայած նրան, որ շատ եմ ժամանակ տրամադրում ակադեմիայի խնդիրներին: Ես նկարելու ցանկություն ունեմ, միտք ունեմ, ժամանակ էլ գտնում եմ, դա բավական է: Լիովին կարելի է համատեղել արվեստն ու վարչական աշխատանքը, եթե այն ինչ-որ չափով արվեստի հետ առնչություն ունի:

*«Իսաբեկյան» ազգանունը Ձեզ օգնե՞լ, թե՞ խանգարել է:*

Ինձ օգնել է Իսաբեկյանների իմ արյունը: Ես մեծատաղանդ նկարչի ու նկարչուհու զավակ եմ և հպարտ եմ դրա համար: Ազգանունն, իհարկե, ինչ-որ տեղ խանգարել է, բայց ոչ հիմա: Առաջներում թերահավատորեն էին վերաբերվում. գուցե կարծում էին, որ հորս միջոցով եմ կյանքում ինչ-որ բանի հասնում: Չարախոսները, թերևս, նույնիսկ ասում էին, որ հայրս է իմ փոխարեն նկարում: Բայց, փառք Աստծո, իմ և հորս ոճերը տարբեր են. պատկերացրեք, եթե հանկարծ նման լինեին: Բայց նաև օգնել է. հեշտ է եղել ծանոթություններ հաստատելը, գործնական հարաբերությունների մեջ մտնելը. «Իսաբեկյան» ազգանունը վստահություն է ներշնչել մարդկանց: Մի խոսքով, Աստծուց շնորհակալ եմ, որ Էդվարդ Իսաբեկյանի նման հայր ունեմ, հիանալի անձնավորություն, տաղանդավոր նկարիչ...

*Տպավորություն է ստեղծվել, որ մշակութային կյանքը Հայաստանում վերելք է ապրում: Դա իրողությո՞ւն է, ըստ Ձեզ, թե՞ միայն տպավորություն:*

Ընդհակառակը, մշակույթն ու արվեստը հիմա անկում են ապրում: Եվ այդպես էլ պետք է լիներ: Սոցիալական խնդիրները, ցանկանում ենք այդ, թե ոչ, իրենց ազդեցությունը թողնում են արվեստի վրա: Լուրջ արվեստ հիմա չի ստեղծվում, որովհետև պատվիրողներ չկան: Որքան էլ ասածս Ձեզ զարմանալի թվա, բայց արվեստը սիրում է պատվիրատուներ: Ես կարող եմ հակառակ կարծիք ունեցողներին ապացուցել այդ: Եթե ուսումնասիրենք արվեստի պատմությունը, կտեսնենք, որ շատ ու շատ մեծ գործեր պատվիրողների շնորհիվ են ստեղծվել: Եթե Հռոմի պապը Միքելանջելոյին չպատվիրեր, մենք հիմա չէինք հիանա «Սիքստինյան կապելլայով»: Դրա համար էլ հայ արվեստագետների մեծ մասը հեռանում է այստեղից կամ, ծայրահեղ դեպքում, իր աշխատանքների վաճառքն է դրսում կազմակերպում: Ժամանակները պետք է փոխվեն, մարդիկ պետք է հասունանան, պետք է հասկանան, որ արվեստագետին իր աշխատանքի համար պետք է վճարել, ոչ թե միայն նվեր խնդրել:

*Արվեստը Ձեր մեջ, Դո՞ւք արվեստում:*

Ես ինձ չեմ պատկերացնում արվեստից դուրս: Մի քանի անգամ փորձել եմ նաև ուրիշ բաներով զբաղվել, այդ ասպարեզում ևս արդյունքի հասնել, չի ստացվել: Գեղարվեստի ակադեմիայի իմ աշխատանքն էլ, եթե արվեստի հետ կապված չլիներ, հաջողություններ չէի ունենա: Իսկ արվեստում ես իմ տեղը, կարծում եմ, ունեմ: Երևի ճիշտ կլինի, եթե ուրիշները գնահատեն, բայց ես համարում եմ, որ կայացած նկարիչ եմ, կայացած արվեստագետ: Առանց արվեստի՝ իմ կյանքը չեմ պատկերացնում, ապագա չեմ տեսնում: Հիմա միայն մի ցանկություն ունեմ՝ շատ ժամանակ ունենայի՝ նկարակալի առաջ անցկացնելու համար:

*Թամարա Հակոբյան*